Լաուրա Պետրոսյանց[1]

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Ընդերքը և դրանում առկա բնական ռեսուրսները երկրի ներուժի կարևորագույն բաղադրիչներ են և հանդիսանում են պետության սեփականությունը: Արագ զարգացող արդյունաբերության պայմաններում անհնար է պատկերացնել ժամանակակից տնտեսությունը առանց հանքարդյունաբերական ճյուղի: Օգտակար հանածոների արդյունահանումը, վերամշակումը, իրացումը և օգտագործումը բյուջեի գոյացման հիմնական գործոններից են:

Օգտակար հանածոների օգտագործելի և սպառվող լինելը առաջին պլան են մղվում շահագրգիռ անձանց և պետության հարաբերությունների պատշաճ իրավական կարգավորման խնդիրները: Հաշվի առնելով ընդերքի և դրանում առկա օգտակար հանածոների բացառիկ նշանակությունը՝ ընդերքի պահպանության և ռացիոնալ օգտագործման ապահովման հիմնական կազմակերպչաիրավական գործիքներից է համարվում ընդերքօգտագործման լիցենզավորումը[2]:

ՀՀ գործող օրենսդրության իմաստով էկոլոգիական թույլտվությունների ներքո պետք է հասկանալ շրջակա միջավայրի և դրա առանձին տարրերի վրա սահմանված որոշակի չափաքանակով բացասական ներգործություն ունենալու, ինչպես նաև առանձին բնական ռեսուրսների օգտագործման համար պետական լիազորված մարմնի կողմից տրված թույլտվությունները:

Ի՞նչ է լիցենզավորումը:

Մինչ ընդերքօգտագործման թույլտվությունների համակարգին անցնելը առաջին հերթին փորձենք բացահայտել ի՞նչ է իրենից ներկայացնում լիցենզավորումն ընդհանրապես:

Լիցենզավորումը տնտեսության վրա պետական կառավարման ներգործության ամենահզոր միջոցներից է: Այն տնտեսական գործունեության կառավարման և դրա նկատմամբ պետական վերահսկո-

---

[1] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., պրոֆեսոր Ա. Բ. Իսկոյան:

[2] Տե՛ս **Бринчук М. М.,** Учебник. 2-е изд., перераб. и доп. – М.: Юристъ, 2005, էջ 400:

ղություն իրականացնելու ձևերից մեկն է, որի գլխավոր վարչաիրավական բնույթը թույլտվությունն է և որը կոչված է ապահովելու անձի, հասարակության և պետության անվտանգությունը[3]:

Լիցենզավորումը իրենից ներկայացնում է բարդ, բազմակողմանի սոցիալ-իրավական երևույթ, որը դիտվում է տարբեր կողմերից: Իրավաբանական գրականության մեջ փորձեր են արվում հստակեցնելու համար լիցենզավորման ինստիտուտի էությունը և իրավական բնույթը:

Իրավական դոկտրինայում գոյություն ունեն տարբեր պատկերացումներ լիցենզավորման բնույթի վերաբերյալ: Գիտնականների մեծամասնությունը այն կարծիքին է, որ լիցենզավորման իրավական բնույթի հիմքում ընկած է պետական կառավարման չափանիշը, եղանակը, մեթոդը, ձևը: Այսպես, Ա. Պ. Ալեխինը և Յ. Մ. Կոզլովը լիցենզավորումը դիտարկում են որպես կառավարման իրավական ձևերից մեկը, քանի որ լիցենզավորումը ձևակերպվում և իրականացվում է իրավական ակտի հիման վրա (լիցենզիա), որի ընդունմամբ առաջանում են վարչա-իրավական հարաբերություններ լիցենզավորվողի և գործադիր իշխանության մարմինների միջև[4]:

Ժ. Ա. Իոնովի կարծիքով, լիցենզավորումը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության լեգիտիմության հավաստման ձևերից մեկը[5]: Սույն տեսակետը շատ հաճախ է հանդիպում գրականության մեջ, քանզի այն հանգում է տնտեսվարող սուբյեկտի կոնկրետ տեսակի ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար լիազորությունների օրինականացման ճանաչմանը:

Այլ հեղինակներ լիցենզավորումը դիտարկում են որպես իրավակարգի պահպանության և հասարակության անվտանգության ապահովման միջոց, որը գործում է պետության կողմից քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների կողմից հսկողության ենթակա տնտեսական գործունեությամբ զբաղվելու համար

---

[3] Տե՛ս ՀՀ Վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ/ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի.- Երևանի պետ. համալս.. – ԵՊՀ. հրատ., 2012, էջ 289:

[4] Տե՛ս **Алехин А. П., Кармолицкий А. Н., Козлов Ю. М.,** Административное право Российской Федерации. М., 1997թ.:

[5] Տե՛ս **Ионова Ж. А.,** Правовые проблемы легитимации предпринимательства// Государство и право. 1997. № 1, էջ 46:

արտոնագիր տալու ճանապարհով[6]:

Հարկ է նշել, որ մինչ վերջերս, մի շարք գիտնականներ նույնացնում էին լիցենզավորումը թույլատվական համակարգի հետ և կոչվում էր լիցենզավորման- թույլատվական: Խորհրդային վարչական իրավունքում թույլատվական համակարգի տակ հասկացվում էր կանոնների ամբողջություն, արտադրության ընթացակարգի կարգավորում, որոնք կանոնակարգում են որոշ ապրանքների և նյութերի փոխադրումը, արտադրության կարգը, ձեռքբերումը, օգտագործումը, վաճառքը, ինչպես նաև որոշ ձեռնարկությունների բացումը և շահագործումը[7]:

Իրավաբանական գրականությունում լիցենզավորման-թույլատվական համակարգը դիտարկվում էր երկու ասպեկտով՝ լայն և նեղ: Ա. Բոգդանովի համոզմամբ լիցենզավորման թույլատվական համակարգը լայն առումով դիտվում էր որպես լիազոր պետական մարմինների կառավարչական ազդեցության օբյեկտ, որոշակի հասարակական հարաբերությունների ամբողջություն, որոնք ծավալվում են որոշակի իրավական ինստիտուտների և նորմերի իրացման հետևանքով[8]:

Ա. Բ. Գորմախի կարծիքով լիցենզավորման-թույլատվական համակարգը նեղ առումով իր մեջ ներառում է հասարակական միայն որոշ հարաբերությունների ամբողջություն, որոնք իրականացվում են պետական մարմինների կողմից և կազմում են որոշակի ապրանքների և նյութերի ձեռքբերման, փոխադրման, օգտագործման և բաշխման կարգը, ինչպես նաև որոշ ձեռնարկությունների, կազմակերպությունների բացում և շահագործում քաղաքացիների, հասարակության անվտանգության ապահովման և հասարակական կարգի պաշտպանության նպատակով[9]:

Ա. Բոգանդովը նշում է, որ ժամանակակից պայմաններում, երբ լիցենզավորման ենթակա են բավական մեծ քանակի ձեռնարկատի-

---

[6] Տե՛ս **Бельский К. С., Елисеев Б. П., Кучеров И. И.,** О системе специальных методов полицейской деятельности//Государство и право. 2003. № 4, էջ 16:

[7] Տե՛ս Советское административное право. Управление в области административно-политической деятельности. М., 1978 թ.:

[8] Տե՛ս **Багданов А.,** «О правовой природе лицензирования» http://www.jourclub.ru/32/498/

[9] **Гормах А. Б.,** Правовые и организационные основы деятельности милиции общественной безопасности по осуществлению лицензионно-разрешительной работы. Дисс. …канд. юрид. наук. М., 1998.

բական գործունեության տեսակներ, ինչպես նաև գործունեության տեսակներ, որոնք կապված չեն շահույթ ստանալու հետ, չի կարելի լիցենզավորման համակարգը նույնացնել թույլատվականի հետ, քանի որ դա կհանգեցնի իրավական հակասությունների[10]:

Այսպես «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի[11] 3-րդ հոդվածի համաձայն լիցենզիան լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն է, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող փաստաթուղթ: *Փաստորեն Օրենքը նույնացնում է լիցենզավորում և թույլտվություն հասկացությունները:*

ՀՀ Սահմանադրության[12] 33.2 հոդվածը ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Այս դրույթի իրականացումը երաշխավորվում է նաև տարբեր գործունեությունների լիցենզավորմամբ՝ ջրօգտագործման, անտառօգտագործման, ընդերքօգտագործման և այլն:

Տվյալ լիցենզիաների ստացումը և դրանց պահանջներին համապատասխանությունը նշված դեպքերում իրենից ներկայացնում է յուրաքանչյուրի առողջ և բարեկեցիկ միջավայրում ապրելու իրավունքի իրացման պայմաններից մեկը, իսկ այդ պայմանների անհամապատասխանությունը կախված հանրության համար վտանգավորության աստիճանից՝ որակավորվում է որպես վարչական իրավախախտում կամ հանցագործություն:

Ընդերքի տրամադրումն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլատրվում է միայն դրանում պարունակվող պաշարների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ընդերքաբանական փորձաքննությունից և ուսումնասիրված ու գնահատված պաշարների քանակը և որակը սահմանված կարգով հաստատվելուց հետո: Սա նշանակում է, որ թույլտվության ստացման գործընթացին նախորդում է փորձաքննության փուլը: «Շրջակա մի-

---

[10] Տե՛ս **Багданов А.,** «О правовой природе лицензирования»http://www.jourclub.ru/32/498/

[11] Ընդունվել է 30.05.2001 թ., ուժի մեջ է մտել 08.08.2001 թ., ՀՀՊՏ 2001.08.08/26(158) Հոդ. 581:

[12] Ընդունվել է 27.11.2005 թ., ուժի մեջ է մտել 05.12.2005 թ., ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում Հոդ. 1426:

ջավայրի մասին ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքը[13] տալիս է փորձաքննության հասկացությունը: Ըստ օրենքի փորձաքննությունը հիմնադրութային փաստաթղթի, նախատեսվող գործունեության հայտի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում դրանց թույլատրելիության վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց է:

Ընդերքօգտագործման լիցենզավորում:

Որպես իրավական պահպանության օբյեկտ ընդերքը երկրակեղևի մաս է, որը տեղակայված է հողաշերտից ներքև, իսկ հողաշերտի բացակայության դեպքում երկրի մակերևույթի, ջրավազանների և ջրահոսքերի հատակից ներքև՝ մինչև աշխարհագրական ուսումնասիրությունների և յուրացման համար հասանելի խորություն[14]: Ընդերքի օրենսդրական հասկացությունը տրվում է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *«**ընդերքը** ՝ հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս է, որը մատչելի է ընդերքօգտագործման համար»:*

Ինչպես ցանկացած բնական ռեսուրսի, այնպես էլ ընդերքի իրավական ռեժիմը սահմանող նորմերը կարգավորում են երկու խումբ հասարակական հարաբերություններ՝ ընդերքի օգտագործման և պահպանության:

Ընդերքօգտագործման իրավունքը համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքն է:

Ընդերքօգտագործման իրավունքի պատմությանը հայտնի են օգտագործման երեք հիմնական ձև. 1) օգտակար հանածոների արդյունահանում, 2) երկրաբանական ուսումնասիրություններ, 3) օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակներով ըն-

---

[13] Ընդունվել է 21.06.2014 թ., ուժի մեջ է մտել 09.08.2014 թ., ՀՀՊՏ 2014.07.30/41(1054) Հոդ.636:

[14] Տե՛ս **Ерофеев Б. В.,** Экологическое право., М., 2006 г. էջ 217:

դերքաօգտագործում:

Ընդերքօգտագործման յուրաքանչյուր ձևի իրականացման իրավունքի ձեռքբերման և իրացման վերաբերյալ հիմնական օրենսդրական պահանջներից է լիցենզավորումը (թույլտվության տրամադրումը):

Ընդերքի օգտագործման և պահպանության հարաբերությունները կարգավորվում են Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով: ՀՀ-ն ընդունել է երեք օրենսգիրք 1992թ.[15], 2002 թ[16]. և ներկայիս գործող 2011[17] թվականի Ընդերքի մասին օրենսգիրքը: Օրենսգրքերից յուրաքանչյուրի ընդունմամբ լիցենզիաների/թույլտվությունների տրամադրման կարգի վերաբերյալ եղել են մի շարք փոփոխություններ:

Այժմ փորձենք վերը նշված երեք օրենսգրքերի լույսի ներքո ներկայացնել ընդերքօգտագործման թուլտվությունների համակարգը Հայաստանի Հանրապետությունում:

1992 թվականին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենսգրքում ամրագրված էր, որ ընդերքի շահագործումը վճարովի էր և իրականացվում էր ըստ արտոնագրի (թույլտվություն) և համաձայն պայմանագրի (հոդված 10):

Օգտակար հանածոների արդյունահանման համար ընդերքը օգտագործման էր տրվում ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում հատկապես լիազորված պետական մարմինների միջոցով, որոնք տալիս էին թույլտվություն (արտոնագիր):

Տրված թույլտվությունները (արտոնագրերը) ընդերքից օգտվողի և հատկապես լիազորված մարմնի միջև սահմանված կարգով պայմանագիր կնքելու հիմք էին հանդիսանում (հոդված 10):

Որպես կանոն, ընդերքից օգտվելը ժամկետային էր և որոշվում էր արտոնագրի հիման վրա կազմվող համապատասխան պայմանագրով: Իսկ օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ընդերքօգտագործումը կարող էր լինել անժամկետ (հոդված 11):

Իսկ ինչ վերաբերում էր երկրաբանական-հետախուզական աշխատանքներին, որոնք պահանջում էին անցնել լեռնային փորվածք-

---

[15] Ընդունվել է 19.03.1992 թ., ուժը կորցրել է 21.12.2002 թ., ՀՀԳԽՏ 1992/6(1010) 31.03.92

[16] Ընդունվել է 06.11.2002 թ., ուժը կորցրել է 01.01.2012 թ., ՀՀՊՏ 2002.12.11/54(229) Հոդ. 1268:

[17] Ընդունվել է 28.11.2011 թ., ուժի մեջ է մտել 01.01.2012 թ., ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ. 1661:

ներ ու հորատանցքեր կամ սահմանված էին հատուկ ցանկով, թույլատրվում էին միայն լիազորված մարմնի կողմից՝ համապատասխան արտոնագիր ստանալուց հետո. երկրաբանական այլ ուսումնասիրությունների դեպքում արտոնագիր չէր պահանջվում (հոդված 21):

Ստորերկրյա կառույցների շինարարության ու շահագործման համար օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակներով ընդերքի օգտագործումը կատարվում էր հատուկ նախագծով, որոնք հաստատվում էին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով (հոդված 35): Բացառիկ դեպքերում հատուկ պահանջների ու պայմանների պահպանմամբ՝ վնասակար նյութերը և արտադրության թափոնները թաղելու, կեղտաջրերը թափելու համար թույլատրվում էր ընդերքի օգտագործում:

Վերը շարադրվածից կարելի է ենթադրել, որ թույլտվությունների (արտոնագրերի) տրամադրման կագը թերի էր կարգավորված: Թույլտվության տրամադրման ժամկետները հստակ արտացոլված չէին օրենսգրքում, որը և հանգեցնում էր իրավախախտումների:

2002 թվականին ընդունված «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրքը ի տարբերություն նախորդի անահամեմատ հստակ էր սահմանում ընդերքօգտագործման ձևերից յուրաքանչյուրի լիցենզիաների/թույլտվությունների տրամադրման կարգը:

Միաժամանակ գործում էր Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին ՀՀ օրենքը[18], որը սահմանում էր ՀՀ տարածքում ընդերքի ուսումնասիրության և կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու կարգը, ինչպես նաև կարգավորում էր հանքային իրավունքների շուրջ ծագող իրավահարաբերությունները (հոդված 1):

Ըստ օրենքի 10-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետության տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների որոշ տեսակների կատարումը, օգտակար հանածոների հանքավայրերի շահագործումը, ստորերկրյա կառույցների շինարարությունն ու շահագործումը ենթակա էր լիցենզավորման:

Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ու-

[18] Ընդունվել է 05.11.2002 թ., ուժը կորցրել է 01.01.2012 թ., ՀՀՊՏ 2002.11.29/52(227) Հոդ.1216:

սումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին ՀՀ օրենքում ամրագրում էր հանքարդյունահանման լիցենզիան, հանքարդյունահանման հատուկ լիցենզիան, ուսումնասիրության լիցենզիան, ուսումնասիրության հատուկ լիցենզիան, ինչպես նաև առանց լիցենզավորման (թույլտվության) հիման վրա հանքարդյունահանման իրականացումը:

Այսպիսով, հանքարդյունահանման լիցենզիան իրենից ներկայացնում էր գրավոր թույլտվություն, որն իրավունք էր տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնել հանքարդյունահանում: Այն տրամադրվում էր 12 տարին չգերազանցող ժամկետով (հոդված 3):

Հանքարդյունահանման հատուկ լիցենզիան նույնպես գրավոր թույլտվություն էր ընդերքի որոշակի տեղամասում հանքարդյունահանում իրականացնելու իրավունքի վերաբերյալ, սակայն ի տարբերություն հանքարդյունահանման լիցենզիայի տրամադրվում էր ավելի քան 12 տարով, բայց 25 տարին չգերազանցող ժամկետով:

Ի տարբերություն ուսումնասիրության լիցենզիայի, որը տրամադրվում էր 3 տարին չգերազանցող ժամկետով և իրենից ներկայացնում էր գրավոր թույլտվություն ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու ընդերքի ուսումնասիրություն, ուսումնասիրության հատուկ թույլտվությունը տրվում էր ավելի քան 3 տարով, բայց 5 տարին չգերազանցող ժամկետով (հոդված 3):

Օրենքի 54-րդ հոդվածը սահմանում էր դեպքեր, երբ հանքարդյունահանումը իրականացվում էր առանց լիցենզիայի՝ թույլտվության հիման վրա: Լիցենզիա չէր պահանջվում առաջինը, եթե արդյունահանվելու էին ընդհանուր տարածում ունեցող օգտակար հանածոներ ՀՀ կառավարության սահմանած տեղական նշանակության հանքավայրերից և երկրորդ՝ հանքարդյունահանումն իրականացվելու էր միայն բաց եղանակով, մինչև 2 մետր արդյունահանվող շերտի հզորությամբ՝ առանց հորատապայթեցման աշխատանքների:

Վերը նշված պայմանները բավարարող և օրենքին համապատասխան բովանդակության լիազոր մարմին դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուին օրենքով սահմանված կարգով դիմումատուին անժամկետ տրվում է հանքարդյունահանում իրականացնելու գրավոր թույլտվություն:

Այսպես, 2002 թ. օրենսգիրքը նախատեսում էր և՛ լիցենզավորում և՛ թույլտվություն հասկացությունները: Կարծում ենք, որ նման բար-

դացված ընթացակարգը խոչընդոտ էր հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքի լիարժեք իրականացման համար. առաջ էր գալիս օրենսդրության հստակեցման անհրաժեշտությունը, որի փորձը արվեց 2011 թ. նոր օրենսդրության ընդունմամբ:

Երկրի տնտեսական զարգացումը ընդերքօգտագործման ոլորտում պահանջեց նոր իրավական կարգավորում, որը և արտացոլվեց 2011 թվականին ընդունված Ընդերքի մասին ՀՀ նոր օրենսգրքում: Այս օրենսգրքի ընդունմամբ, ըստ էության, վերանայվեց կարևոր խնդիրներից մեկը. ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պարզեցումը:

Ընդերքի մասին նոր օրենսգիրքը համապատասխանացվել է լավագույն միջազգային փորձին՝ նոր ֆիսկալ քաղաքականության ներդրմամբ, ընդերքօգտագործման նախագծերի տեխնիկա-տեխնոլոգիական պետական փորձաքննության համակարգի ստեղծմամբ՝ ընդերքի լիարժեք և արդյունավետ օգտագործման նպատակով:

ՀՀ-ում մինչև 2011 թվականը գործող Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքը նախատեսում էր օգտագործման երեք հիմնական ձև, մինչդեռ գործող օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ընդերքը կարող է օգտագործվել. 1) երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով, 2) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով: Օրենսգրքի այս թվարկման մեջ բացակայում է օգտագործման 3-րդ ձևը: Սակայն Օրենսգրքի 1-ին հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ քաղաքաշինական օբյեկտների այդ թվում՝ ամբողջությամբ կամ մասնակի ստորերկրյա նախագծման, ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների և կառուցապատման հետ կապված ընդերքօգտագործման հարաբերությունները սահմանվում են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և դրանց կիրառումն ապահովող իրավական ակտերով: Այս կարգավորումից հետևում է, որ Ընդերքի մասին օրենսգիրքը նախատեսում է օգտագործման երրորդ ձևը, սակայն դրա կարգավորումն իրականացվում է ոչ թե ընդերքի մասին օրենսգրքով, այլ քաղաքաշինական օրենսդրությամբ:

Ընդերքօգտագործումը ստորերկրյա կառուցների շինարարության նպատակով չի ենթադրում բացառապես քաղաքաշինական գործունեության իրականացում, հետևաբար այն չի կարող կարգավորվել միայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով: Այս դեպքում գերակա նշանակությունը տրվում է ընդերքի ոլորտի օրենսդրությանը՝ իր

առանձնահատկություններով:

Ստորև կքննարկենք ընդերքօգտագործման յուրաքանչյուր ձևի իրականացման իրավունքի ձեռքբերման և իրացման վերաբերյալ հիմնական օրենսդրական պահանջները:

Երկրաբանական ուսումնասիրությունների իրավունք

Երկրաբանական ուսումնասիրություններն ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր է, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հիրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները (հոդված 3, կետ 2):

Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 4-րդ գլուխը սահմանում է իրավունքի ձեռքբերման կարգը: Այդ ընթացակարգը որոշակիորեն տարբերվում է երկրաբանական ուսումնասիրության նպատակից: Դրանք երկուսն են՝ 1) օգտակար հանածոների արդյունահանման և 2) այլ նպատակներով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրականացում:

Անկախ երկրաբանական ուսումնասիրության նպատակից՝ ուսումնասիրության իրականցման մտադրություն ունեցող սուբյեկտները որպես լիազորված մարմին պետք է ներկայացնեն դիմում և ուսումնասիրության աշխատանքների ծրագիր: Վերջինը սահմանում է ուսումնասիրության աշխատանքների ենթադրյալ ժամկետները, մեթոդները, միջոցները, ծավալները և այլն: Դրան պետք է կցվեն նաև անհրաժեշտ քարտեզագրական նյութեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատականը (հոդված 39, կետ 1,2): Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների հայտի վերաբերյալ դրական որոշման դեպքում տրամադրվում է ***թույլվություն*** և կնքվում է համապատասխան պայմանագիր (հոդված 32, կետ 4): Այլ նպատակով երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելիս թույլտվության փոխարեն տրամադրվում է ***համաձայնություն*** և կնքվում է պայմանագիր (հոդված 32, կետ 3): Համաձայնության և թույլտվության բովանդակության օրենսդրական կարգավորման համեմատությունից հետևում է, որ դրանցով սահմանվող իրավական ռեժիմները միմյանցից գրեթե չեն տարբերվում: Ինչպես թույլտվությունում, այնպես էլ համաձայնությունում պետք է նշվեն՝ 1) համաձայնության կամ

թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և գործողության ժամկետը, 2) ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները՝ միասնական կոորդինատային համակարգով, 3) ուսումնասիրության նպատակը: Միայն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ուսումնասիրություն իրականացնելիս պետք է թույլտվությունում նշվի նաև *օգտակար հանածոյի անվանումը* (հոդված 34, 37):

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի *երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը* տրվում է 3 տարին չգերազանցող ժամկետով: Այն ընդերքօգտագործողի ներկայացրած դիմումի հիման վրա կարող է երկարաձգվել միմյանց հաջորդող 3 ժամանակահատվածի համար՝ յուրաքանչյուր անգամ 2 տարուց ոչ ավելի ժամկետով (հոդված 42, կետ 1): Թույլտվության գործողության ժամկետը օգտակար հանածոյի պաշարների հաստատումից հետո կարող է երկարաձգվել ևս 1 տարով՝ հանքարդյունահանման նախագիծը կազմելու համար (հոդված 2): Ժամկետի երկարացման համար անհրաժեշտ է օրենքի պահանջներին համապատասխան ներկայացնել դիմում, ըստ որի թույլտվության ժամկետը երկարաձգվում է ոչ ավել, քան խնդրարկվող ժամկետով (հոդված 6):

Ինչ վերաբերում է թույլտվության գործողության ժակետի երկարաձգուման մերժմանը, ապա դա լինում է, եթե. 1) ընդերքօգտագործման իրավունքի երկարաձգումը պայմանավորված է ընդերքօգտագործողի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման խախտմամբ, 2) ընդերքօգտագործողն ուսումնասիրության արդյունքների հիման վրա առանձնացված ոչ հեռանկարային տեղամասերից հրաժարում չի նախատեսում, ինչը չի կարող լինել պակաս, քան նախապես հաստատված տեղամասի կեսը (հոդված 42, կետ 4):

Օգտակար հանածոների արդյունահանման իրավունք

Օգտակար հանածոյի արդյունահանումը օգտակար հանածոյի հանքավայրերից դուրսբերմանն ու դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր է (հոդված 3, կետ 17):

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի օգտագործումն իրականացվում է պետական լիազոր մարմնի տրամադրած *թույլտվության* հիման վրա: Վերջինիս կցվում են հանքարդյունահանման պայմանագիրը, լեռնահատկացման ակտերը,

համապատասխան փորձաքննություններ անցած օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, դրանք թույլտվության անքակտելի մասն են:

Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը տրվում է հանքավայրի շահագործման ողջ ժամկետով, բայց ոչ ավելի քան 50 տարի: Այն հաշվարկվում է տվյալ հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա (հոդված 55, կետ 1):

Ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ հանքարդյունահանման թույլտվության ժամկետը երկարաձգելու համար օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը կարող է ցանկացած ժամանակ դիմել լիազոր մարմնի: Սակայն դա պետք է լինի ոչ ուշ, քան օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետի ավարտից 6 ամիս առաջ (հոդված 55, կետ 2):

Օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակներով ընդերքօգտագործում

Օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակներով ընդերքից օգտվելու հիմնական ձևերն են՝

1) ստորերկրյա կառույցների շինարարություն.

2) տրանսպորտային ուղիների ստեղծում.

3) արտադրության թափոնների տեղադրում (ըստ 2002 թ. «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի հոդված 30, կետ 2):

Քաղաքաշինության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ դեռևս չեն սահմանվել օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակներով ընդերքից օգտվելու իրավական հիմքերը: Ընդերքի մասին ՀՀ նախակին օրենսգիրքը սահմանում էր նշված նպատակով ընդերքի օգտագործման իրավունքը հավաստող *լիցենզիայի հիմնական պայմանները.* ստորերկրյա կառույցի նպատակը, լիցենզիայի տրամադրման հիմքերը, աշխատանքների կատարման ժամանակացույցն ըստ փուլերի՝ շինարարական աշխատանքների սկիզբը և ավարտը, օգտագործման տրվող ընդերքի տեղամասի տարածական սահմանները և ընդերքից օգտվելու հետ կապված լեռնահատկացման սահմանները, կառույցի շահագործման և պահպանության հաշվարկային ժամկետները, ստորերկրյա կառույցների շահագործման հատուկ պահանջները և այլ պայմաններ (ըստ 2002 թ. «Ընդերքի

մասին» ՀՀ օրենսգրքի հոդված 35):

Շրջակա միջավայրի աղտոտման համալիր կանխարգելման և հսկման կարգավորման (IPPC) համակարգ

Էկոլոգիական թույլտվությունների համակարգի մասին խոսելիս հարկ է անդրադառնալ նաև դրա զարգացման տեսանելի հեռանկարին, որը շրջակա միջավայրի աղտոտման համալիր կանխարգելման և հսկման կարգավորման (այսուհետ՝ IPPC) համակարգն է: Համապատասխան օրենքի ընդունումը նախատեսվում է 2015 թվականին: Նշված համակարգը փոխարինելու է բնօգտագործման և բնապահպանական թույլտվությունների գործող համակարգին՝ թույլտվությունների ստացման համար ներդնելով տնտեսվարողների համար առավել դյուրին «մեկ պատուհանի» սկզբունքը: IPPC համակարգի հիմնական առավելություններից են անհարկի վարչարարության կրճատումը, բոլոր բնապահպանական և բնառեսուրսային թույլտվությունների տրամադրումը միասնական ընթացակարգով առավելագույնը 240 օր ժամկետում[19]: IPPC-ի շրջանակներում անհրաժեշտ թույլտվությունները տրամադրվում են դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո մինչև գործունեությունը փաստացի սկսելը:

ԵՄ-ում IPPC համակարգը (ներդրվել է «Աղտոտման համալիր կանխարգելման և հսկման կարգավորման մասին» Եվրոպայի խորհրդի 96/61/EC դիրեկտիվի[20] հիման վրա) գործում է 1996 թվականից և, ըստ էության, կազմում է տնտեսական գործունեության էկոլոգիական կարգավորման կենտրոնական տարրը: Այն իրենից ներկայացնում է թույլտվությունների տրամադրման համալիր ընթացակարգ տնտեսության առավել քան երեսուն ճյուղերի համար, ինչպես օրինակ մետալուրգիան, հանքարդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը, թափոնների վերամշակումը և այլն: Այն հիմնվում է էկոլոգիական ստանդարտների միասնական համաեվրոպական համակարգի, ինչպես նաև լավագույն հասանելի տեխնոլոգիա-

---

[19] Տե՛ս ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի կայք՝ http://www.elrc.ysu.am/?page=news&id=154&type=5&language_id=1 22.08.2013 թ. դրությամբ:

[20] Տե՛ս OJ L 257, 10.10.1996, p. 26-40:

ների ներդրման խրախուսման վրա[21]:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը կարող ենք արձանագրել, որ Ընդերքի մասին նոր օրենսգրքի ընդունումը ուղղված էր ընդերքօգտագործման ոլորտում առկա գործընթացների կանոնակարգմանը: Դա վկայում է ընդերքօգտագործման ձևերի և դրանց իրականացման կարգի, ժամկետների հնարավորինս պարզեցման մասին, որը բխում էր երկրի տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ շահերից:

Իսկ ինչ վերաբերում է IPPC համակարգին, ապա, գտնում ենք, որ վերջինս թույլ կտա համալիր թույլտվությունների տրամադրման փուլում առավելագույնս համակողմանիորեն հաշվի առնել հնարավոր բացասական ազդեցությունները և մշակել դրանց կանխարգելման միջոցները, որոնք հիմնված կլինեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման գաղափարի վրա:

Лаура Петросянц
Соискатель кафедры гражданско процесса ЕГУ

СИСТЕМА ВЫДАЧИ РАЗРЕШЕНИЙ НЕДРОПОЛЬЗОВАНИЯ В СООТВЕТСВИИ С ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Статья посвящена системе выдачи разрешений недропользования в Республике Армения. В первую очередь оно фокусируется на концепции разрешений, как административно-правовой институт. Далее анализ переходит к выдаче конкретных разрешений недропользования в контексте предыдущих и действующего Кодекса о Недрах Республики Армения. Сделан сравнительно-правовой анализ указанного законодательства, подчеркивая недостатки и возможные решения. Обоснованные в статье перспективы развития могут способствовать усовершенствованию системы разрешений в сфере недропользования.

[21] Տե՛ս **Stefan Scheuer.** EU Environmental Policy Handbook: A Critical Analysis of EU Environmental Legislation. Brussels, 2005, էջ 177, 181:

Laura Petrsossiantz
PhD student of the at the YSU Chair of Civil Procedure

MINING PERMIT SYSTEM UNDER THE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA

The article deals with the Mining Permit System of the Republic of Armenia. First of all it focuses on the concept of permit as an administrative instrument. Afterwords the analysis proceeds to the specific mining permits in the context of previous mining legislation and current Mining Code of RA. Parallels are made with the existing and former Mining Law emphasizing the gaps and possible solutions. Perspectives of development substantiated in the article will enable to make an permits system in the mining sphere more sound.

Բանալի բառեր՝ *ընդերքօգտագործման լիցենզիա, ընդերքօգտագործման թույլտվություն, օգտակար հանածոներ, ընդերքօգտագործման տեսակները:*
Ключевые слова: *лицензия недропользования, разрешение недропользования, минералы, типы недропользования.*
Key words: *mining license, mining permit, minerals, types of minging.*